Քաղաքական երկխոսությունը հոկտեմբերի 2-ից հետո

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Քաղաքական երկխոսության, խնդիրները բանակցությունների միջոցով լուծելու ռեսուրսը հոկտեմբերի 2-ին Խորհրդարանում և նրա շուրջ տեղի ունեցած դեպքերից հետո նվազել է: Եվ դա բնական է: Հայտնի փաստ է, որ կողմերը գնում են բանակցությունների, երբ կա վստահության որոշակի պաշար: Երբ վստահությունը խաթարվում է, մարդիկ բանակցելու իմաստ չեն տեսնում:

Այս պահին, հոկտեմբերի երկուսին հաջորդած շաբաթվա ընթացքում, քաղաքական այն բևեռները, որոնք պետք է բանակցեն, պատրաստ չեն դրան:

Իշխանությունը պատրաստ չէ բանակցելու

Չվստահելու և չբանակցելու համար իշխանականներն ունեն իրենց հիմքերը, որոնք հասկանալի են: Նրանք, ըստ ամենայնի, կարող են համարել, որ հոկտեմբերի 2-ին ընդունված օրինագիծը ցանկացած բանակցային գործընթաց խաթարող ամուր հիմք է, քանի որ առաջին հերթին վնասում է վստահությանը. ինչպե՞ս կարելի է բանակցել, երբ դիմացինը պատրաստ է յուրաքանչյուր պահ օգտագործել իրավիճակ փոխելու կամ անմաքուր խաղերի համար:

Ընդդիմությունը պատրաստ չէ բանակցելու

Բանակցություններից հրաժարվելու իրենց հիմքերն ունեն նաև ներկա ընդդիմադիրները: Նրանք, ըստ ամենայնի, կարող են ունենալ տպավորություն, որ իշխանությունը բանակցել ասելով հասկանում է միայն սեփական պայմանները թելադրելը՝ առանց լսելու ցանկության: Մինչհոկտեմբերերկուսյան բանակցային կարճ ընթացքն ընդդիմադիրներն ընկալել են որպես ոչնչացման անքննելի պահանջների մատուցում և որոշել են «եթե ոչ՝ մենք էլ այսպես կանենք» բանաձևի դեմ ստեղծել «այդ դեպքում մենք էլ այսպես կանենք» մեխանիզմը: Թե ինչ ստացվեց դրանից, բոլորը տեսան:

Կողմերի բանակցային այլընտրանքները

Ստեղծված իրավիճակի պարադոքսն այն է, որ իշխանությունն ու ընդդիմությունն այս պահին ոչ միայն համակարծիք են չբանակցելու հարցում, այլև նույնն են նրանց բանակցային այլընտրանքները: «Մի բանակցեք՝ հաջորդ անգամ ԱԺ մտնող մարդկային հոսքի դեմն առնել չի լինելու» բանակցային այլընտրանքի դեմ կանգնում է «Մի՛ բանակցեք, մարդկային հոսքի դեմն էլ մի առեք ու ստացեք այնպիսի երկիր, ինչպիսին ստացանք մենք 2008-ին»: Ահա ձեզ չասվող, դեռևս լավ չերևացող բանակցային նույնականացվող այլընտրանքները:

Էմոցիոնալ, արժանապատվության էլեմենտներով անընդհատ համեմվող այս քաղաքական կաթսայում, սակայն, անլսելի են մնում այլ ճշմարտություններ, որոնք նույնպես գոյության իրավունք ունեն:

1.Բանակցություններն անհրաժեշտ են հենց իշխանությանը

Իշխանություններն այսօրվա հաղթողներն են: Ցանկացած հաղթող վաղվա պարտվողն է. եթե այս դրույթն ընկալում ստանում է, ապա այն նույնն է, թե բանակցություններն առաջին հերթին պետք են հաղթողներին: Հաղթողը՝ այսօրվա իշխանությունը, իրականում բանակցում է ոչ թե ընդդիմության, այլ վաղվա իր հետ: Այսօրվա «ինքը»՝ վաղվա «իր» հետ:

«Մենք ինչ ունենք իրենց հետ բանակցելու, իրենք լեգիտիմ չեն, իրենց հետևում ուժ չկա»,- այս և նման այլ մոտեցումներն ընկալելի են, բայց ընկալելի են միայն այս պահին և այստեղ: Ժողովրդավարությունն այն մասին չէ, որ մեծամասնությունը ճիշտ է: Մեծամասնությունը միշտ է ճիշտ. մեծամասնությունը ճիշտ է եղել նախնադարյան համայնական հասարակարգից սկսած մինչև օրեր առաջ Երևանի կենդանաբանական այգու արջերի վանդակում: Իրականում ժողովրդավարությունն ուժեղի՝ մեծամասնության, հաղորդակցությունն է թույլի՝ փոքրամասնության հետ՝ հանուն համակեցության, ընդհանուր բարիքի և ապագայի:

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

Եվ ուրեմն, բանակցություններն անհրաժեշտ են հենց իշխանությանը, որպեսզի թեկուզ ոչնչացված, թեկուզ վստահության խնդիր հարուցող, թեկուզ ուժ չունեցող փոքրամասնությանը հեռու պահի հուսահատությունից: Քանի որ ամենափոքր հուսահատությունը վտանգ է ամենաուժեղ իշխանության համար:

2.Բանակցություններն անհրաժեշտ են հենց ընդդիմությանը

Ընդդիմադիրները սիրում են պնդել, որ ստեղծված իրավիճակում իրենք կորցնելու բան չունեն: Առողջ բանականությունը հուշում է, որ բանակցել պետք է ցանկանան առաջին հերթին «կորցնելու բան չունեցողները», որովհետև բանակցությունները ոչ թե կորցնելու, այլ շահեր բավարելու և համատեղ որոշումներով առաջ գնալու մասին են: Ավելին, բանակցությունները նաև հաղթելու մասին չեն, ինչպես սիրում էին ժամանակին պնդել ներկա ընդդիմադիրները: Որքան էլ բարդ ու «վիրավորական» թվա, բանակցությունները կարող են առաջ տանել, կարող են սին պատկերացումներ ջարդել, ի վերջո իրականությունն ավելի լավ հասկացնել: Չբանակցել նշանակում է, որ մնում են կողմերի այլընտրանքները, որոնք մեծ հաշվով նույնական են, ինչպես ներկայացվեց վերևում:

Սրանք են թույլ լսելի մյուս ճշմարտությունները: Հիմա արդեն որոշողը քաղաքական բևեռներն են: Որոշում են իրենք, իրականացնում են իրենք կամ մարդկային զանգվածները, դիտում է աշխարհը, վախվորած սպասում է այն երկիրը, որը վաղը պիտի լինի:

Համառոտագիրը մշակվել է 2018թ. հոկտեմբերի 5-ին կայացած՝ «Քաղաքական երկխոսություն և մենախոսություն» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:

Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Քննարկումը կազմակերպվել է Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի հետ համագործակցությամբ: